 մէկու ետևէ կուգան, դարձուց նաւը դէպ
 'ի նեղուց, ուրկէց որ Սև ծովը մտանք . ու
 Վարիպճէ ըսված տեղը ժամը ութին եր-

կաթը ձգեց: Ան գիշերը հոն անցունելէն
ետեւ, առտըւանց ժամը իննին՝ երկաթը
առած ճամբայ ելանք: Ասքիչ մը վեր ելայ
ան ատենը, բայց առջի օրվան ալէկոծու-
թիւնը դեռ չի դադրած ըլլալուն՝ վարդացի
ու պառկեցայ:

Ասանկ մինչև հետեւեալ օրը ժամը տաս-
նուկէսին ատենը անմիջապէս կըքալէր .
ու մեզ Աղլիմանին առջին բերաւ, որուն
քովն է Սինապի թերակղզին, այսինքն
Աղլիմանին արեւելեան դին:

Սինապ. Սինոբ:

ՍՐԱԳՐԻՆ դիրքը շատ գեղեցիկ երե-
ցաւ ինծի, որ ան թերակղզիին վրայ
պարիսպով պատած երկան բարակ քա-
ղաք մըն է. որուն ներսի դին Ասիական
լեռներուն կպած, դուրսի ծարն ալ ծովուն
մէջը բարձր սար գլուխ մը ըլլալովը, հարա-
ւային, արեւմտեան, ու հիւսիսային հովերը
արգիլելով, արեւելեան դին տպահով նա-
ւահանգիստ մը եղած է:

Թէպէտ աս թերակղզիին արեւմտեան
դին ալ նաւահանգիստ կայ Աղլիմանը,

բայց արեւելեան դիու եղած նաւահան-
 գիստը՝ ձմեռը կենալու համար ապահով է :
 Սենք հոս մնալէն ետեւ , սկըսեցինք նաւել
 դէպ 'ի Սամսօն , ուր Յուլիսի տասնը իննիս
 ցորեկվան ժամը իրեքին հասանք . հոս ալ
 քիչ մը ատեն կանգնեցաւ շոգենաւր : Աս
 միջոցին երկու Յոյն եկան , իրենց համար
 նաւավարին յանձնըված ստակները առ-
 նելու : Ասոնք իրենց գործը լըմընցունե-
 լէն ետեւ , քիչ մը ուշացան . մէկ մըն ալ
 յանկարծ սկըսեց անիւները դառնալ . թէ-
 պէտ նաւավարը իսկոյն իմացաւ անոնց
 նաւին մէջը ըլլալը , բայց չի կանգնեցուցնա-
 ւր : Սարդիկը նորաձեռու անակնկալ ճամ-
 բորդութեան մը հանդրպաժ , վախերնուն
 երեսնուն գոյնը փախաւ . առջի բերանը քիչ
 մը յոյս ունեցան ալ նէ կանգնեցունելուն ,
 ետքը ան ալ չի մնաց . ինչու որ՝ հինգ կամ
 վեց մղոնի չափ Սամսօնէն հեռացաւ շոգե-
 նաւը : Աս բանիս համար հարկաւորեցաւ
 նաւավարին հարցունել , թէ արդեօք ի՞նչ
 էր պատճառը ասանկ ընելուն : Ատաւ ,
 “ Առդէի մէկ հնար մը գտնել , որ մարդիկ
 երբոր նաւը կուգան , իրենց գործը ինչ էնէ՞
 շուտով լըմընցունելէն ետեւ , ատեն չան-
 ցուցած դառնան . հիմայ ասկէց աղէկ հնար
 չըլլար . մէկ մը որ՝ սս մարդիկը վաճառա-

կան են, կարողութիւն ունին ետ դառնալու համար ստակէ ելլել: Արկրորդ՝ շատ մարդ պիտի լըսէ աս բանը. չէ թէ միայն Սամսօնին մէջինները, այլ բոլոր աս տեղականքը գտնրված քաղաքներուն մէջիններն ալ պիտի իմանան. որովհետեւ իրենք վաճառական ըլլալով, շատ տեղ առուտուրի կերթան: Արբորդ՝ ան մարդիկը, որ կըլսեն աս եղած բանը, 'ի հարկէ կըխորհին, որ թէ ասանկ երևելի վաճառականներուն ասանկ դիպուած կըլլայնէ, մէկալունց ալ անշուշտ կընայ ըլլալ. մարդիկ՝ ատենին պարապ տեղը անցնիլը բանի տեղ չեն դներ. բայց ես չեմ ուզեր վայրկեաններուն զուր տեղ անցնիլը անոնք ետ դարձունելուն անհնար ըլլալը գիտնալուս համար": Հիմայ աս երկու ողորմելի Յունաց աչքը դէպ 'ի Սամսօն պաղած մնաց, մինչև որ բոլորովին անտես եղաւ: Երեք չորս ժամէն ետեւ, հեռուն նաւ մը առագաստները բացած երթալը մեր եղած շոգենաւին նավաւարը տեսնելով, նաւը դէպ 'ի անոր ուղղեց. մէկալ նաւէն իմացան շոգենաւին իրենց վրայ երթալը, բայց պատճառը չի գիտնալուն համար փախչելու կաշխատէին. ետքը անհնար ըլլալը գիտնալով, առագաստները վար առած՝ շոգենաւին նաւավարէն ը-

լալու հրամանին կրսպասէին : որ ան ալ մակոյկ սանդուղ մը ծովը իջեցնել տալէն ետեւ, հրաման ըրաւ Յոյներուն, որ մէջք մտնեն, ու մէկալ նաւը երթան : Աչ Յոյները կրցան հարցունել՝ թէ ո՞ր կըխրուկես մեզ, ոչ ալ մէկալ նաւուն նաւավարը կրցաւ բան մը ըսել. ասանկ անոնք գացին իրենց ճամբան, ու մենք ալ դէպ'ի Տրապիզոն, ուր Լստուծոյ յաջողութեամբը Յուլիսի 20 ին ցորեկվան ժամը իրեքին ողջ առողջ հասանք : Մենք մէջէն դուրս չեւա՞ծ՝ բարեկամնիս եկաւ մեզ առաւ, ու իր տունը տարաւ : Օրով մեզ զարնելուն համար, ան օրը մինչև իրիկուն հիւանդի պէս էինք. միւս օրն ալ՝ ճամբու համար հարկաւոր եղած բաները կարգի դրած, Յուլիսի 22 ին առտըւանց ժամը մէկուկէսին գացինք, ու մեզ բերող Լստէքս անուն շոգենաւը մտանք Սամսոն երթալու, ուր՝ հետեւեալ օրը առտըւանց ժամը տասնուկէսին հասանք :

Սամսոն . Լստէքս :

ԼՍՈՐ դիրքը եղածին չափ գեղեցիկ՝ նաւահանգիստն ալ մեծ է, բայց ապա-

Հով չէ : Ա՛ ճառականութեան յարմար
 տեղ ըլլալուն համար , Հայոց ազգէն 20
 տունի չափ ուրիշ քաղաքներէ եկած են ,
 որոնք ոչ եկեղեցի , ոչ քահանայ , և ոչ
 դպրատուն ունին : Ա՛ս տեղս շատ
 ծխախոտի առուտուր կը լլայ : Աէս ժամու
 չափ հեռուն Յունաց գեղ մը կայ Վատրքէջ
 անունով : Ա՛ն օրը ժամանակ չանցունելով
 տեսնելու գացինք , ուր տեղ հին եկեղեցի
 մը ունին , մէկ մըն ալ քարաշէն նոր կը շի-
 նէին . բնակիչքը 200 տունի չափ կայ , ամ-
 մէնն ալ Յոյն : Ա՛ս գեղը Վամսօնին հա-
 բաւային դին է . մենք հոս քիչ մը պըտը-
 տելէն ետե , շուտ մը Վամսօն դարձանք
 անձրե գալուն համար , ուրկէց ան օրը
 ժամը իրեքին հեծանք՝ Չարչամպա եր-
 թալու . որովհետե ()սման բոլոր ի-
 շան հոն ըլլալուն , պէտք էր հրամանագիր
 պատրուակու առնելու համար երթալ :
 Վամսօնէն 2 ժամու չափ վեր վար բլուր-
 ներէ կամ լեռներէ անցանք . բայց անկէց
 մինչև Չարչամպա՝ ճամբաները բնաւ լեռ
 կամ բլուր չի կայ , մեծ ընդարձակ դաշտ
 մըն է . տեղ տեղ արտեր ու ծառնոցներ ալ
 ըլլալով , շատ գեղեցկացուցեր են : Արեւի
 է օդը առողջարար չըլլայ . քանզի օդուն խո-
 նաւութենէն հողը տեղ տեղ ջրոտ գտանք .

ան օրը իրիկվան ժամը տասնին հասանք
Չարշամպա, որ Սամսօնէն 8 ժամ է:

Չարշամպա :

Ալաւանը դուր տեղ ըլլալուն համար,
մէջ տեղէն ալ Չարշամպա Քրմախը
ըսված գետը անցնելուն, զուարճալի զբօ-
սանաց տեղ մըն է եղեր. աւանդութիւն
է որ, հոս տեղ՝ առաջ լիճ է եղեր. անոր
համար հիմայ հրովարտակներուն Ֆէր-
հաննէ-բոն մէջը՝ «Ղէնիկ կէօլը» կը գրեն:
Այս Չարշամպա գետին, կամ Աէշիլ Քրմա-
խին արեւմտեան դին Քրիստոնեաները կը-
բընակին, արեւելեան դին ալ՝ Տաճկըները.
գետին վրայ փատէ կամուրջ մը կայ, ան ալ
հաստատուն չինված չէ. ան տեղացի մար-
դիկը ըսին թէ տարին մէկ երկու մարդ կը-
կորսըվի. երբեմն նաւակներով կանցնին
գիմացէ գիմաց: Տուներուն շէնքը մանա-
ւանդ շայոց՝ Յունաց՝ շատ պարզ են. ծա-
ւերը կտրեր՝ բերեր ու մէկըզմէկու վրայ
շարեր են. մնացած ծակերն ալ հողով ծե-
փեր՝ ըրեր են տուն: 200 տունի չափ շայ
կայ. 130 ի չափ ալ Յոյն. մէկ մէկ եկե-

չեցի, ու մէկ մէկ դպրատուն ունին. ամէն
մէկուն մէջը 50 ահան տղաք կան:

Հայոց վարժապետը դպրատանը մէջ
կար կրկարէր: Վացած ատենս տղոցը ձեռ-
քը գիրք տեսայ, բայց վարժապետը կար
կարելէն անոնց սորվեցունելու ատեն չու-
նենալուն համար՝ կրնամ ըսել թէ ան գիր-
քերը տղոցը օգուտ մը չունէր: Ինչևիցէ ան
գիշերը հոն Աւրոպացի բժիշկի մը տուն
ձնալով, առտրւանց գացինք () սման բղեշ-
տին, Արքայական հրովարտակը ցուցունե-
լով իրմէն հրամանագիր մը առնելու հա-
մար. ուր մէկ մէկ սուրճ խմելէն ետև, հրա-
մանագիրը առած՝ ետ դարձանք: Ըն օրը,
որ էր Յուլիսի 24, ցորեկվան ժամը 5 ին ա-
տենը հեծանք Խննէ երթալու. որ Սամսո-
նէն դէպ 'ի Տրապիզօն Աւ ծովուն եզերքն
է: Ըսոր ճամբան դուր ու զուարճալի է. 6
ժամու չափ երթալնուս ետև, սկըսեցինք
ծովեզերքէն երթալ մինչև կէս ժամ ձնա-
ցած Խննէին. որ անկէց ետև թէպէտ ծո-
վեզը, բայց բլուրներէ վեր ելլելով վար
իջնալով, գիշերվան 1 ու կէսին հասանք, որ
Չարշամպայէն 10 ժամ է:

Իննէկէ մին Իննէօ :

ԸՍ քաղաքին ծովեզերեայ տուները
 հարաւ , ու շուկային երեսը դէպ 'ի
 արևմուտք կրնայի . շատ տուներ ալ ան
 ծովեզերեայ տուներուն վրայօք դէպ 'ի
 ներս բլուրին երեսը շինված է : Վաւահան
 գիստը անյաջող է ծանծաղ սըղ ըլլալուն
 համար . բնակիչներն են Հայ , Հոյն , ու
 Տաճիկ : Հայերը 48 տուն են . նոր մէկ
 քարաշէն եկեղեցի մը շիներ էին . որուն
 համար 100 հազար ղուռուշ գնաց ըսին . հին
 եկեղեցիին տեղն ալ դպրատուն կը շինէին :
 Ըստեղի գլխաւոր առուտուրին օրը Աիրաւ
 կի օրն է . թէ որ ուրիշ օր խանութնին գո-
 ցելու ըլլաննէ , ան օրը պիտի բանան : Հոյ-
 ները 330 տուն են կըսվի , բայց 500 ի չափ
 կայ . որոնց կէսին չափընաւավար , ու կէսին
 չափն ալ գինի ծախող են . որովհետեւ 70 ի
 չափ գինետուն կայ : Վացած գիշերնիս՝ ա-
 տենը ուշ ըլլալուն , Մէնզիլխանան պառ-
 կեցանք . բայց առտուրանց ուրիշ սեճեակ մը
 գտան մեզի հանգիստ ընել տալու համար :
 Հետեւեալ օրը՝ որ Աիրակի էր , եկեղեցի
 երթալէս ետեւ , մահտեսի Սարգիսին հե-

տը տեսութիւն ըրի, որ ան տեղի Հայոց
երևելին է : Իրենք պատմեցին թէ շատ
սիրով են մէկզմէկու հետ, ու մինչև ան-
գամ մէկզմէկու օգնելու համար կաշխա-
տին. բայց ասոր հաւատալ ինծի դժւար ե-
կաւ, ազգատեաց մարդիկ շատ տեսնելուս
համար. բայց ինտոր որ կլսէ Վրիստոս
Տէրն մեր՝ թէ, “ Ի պտղոյ նոցա ծանիջիք
զնոսա”, ասանկալ ասոնց ըրած բաները ի-
րենց սիրով ըլլալը ինծի հաւատացունե-
լու վկայ մը եղան : Իրենք ամմէնը 48 տուն
են, բայց դպրատան մէջ 70 տղայ կայ, ո-
րոնցմէ հինգը Վերականութիւն կրկար-
դան : Վսիկա շատ մեծ պտուղ է քիչու թեան
ու ժամանակին տգիտութեանը նայելով.
ու ան երևելի եկեղեցին ալ՝ որ շիներ են :
Թէպէտ դպրատունը գիրքի շատ կարօտու-
թիւն ունի, ինչպէս որ իրենք ալ ըսին. բայց
ասչափ բանը որ կարգի դրեր են, կարելի է
բարեսիրտ մարդուն մէկն ալ հարկաւոր ե-
ղած գիրքերը շնորհելով ազգասիրուի մը
կրնէ անոնց : Մենք ասկէց Յուլիսի 27 ին
առտրվան ժամը 10 ու կէսին հեծանք, ու
իրիկվան ժամը ութին Հարշամպա հա-
սանք. ան դիշերը հոն անցուցած՝ առտր-
ւանց ժամը 7 ու կէսին Սամսոն հասանք :
Իւնեէէն մինչև Սամսոն 2 ժամ մնացած,

որ 16 ժամ կըբըշէ, դուր է, ու աժմէնեկին լեռ կամ բլուր չի կայ. որ արևելքէն դէպ'ի արևմուտք կիյնայ. ասանկ ալ ծովեզերքէն (որուն երեսը դէպ'ի հիւսիս է), մինչև 12 ժամ ներս՝ դէպ'ի հարաւ դուր է. ոչ լեռ կայ ոսչափ ընդարձակ տեղը, ու ոչ բլուր կայ. բայց միայն գեղեցիկ պարտէզներով, արտերով, ու ծառնոցներով զարդարած զուարճալի տեղ մըն է: Սամսօնին մէջը ան երկու Յոյները, որ Արստանդնուպօլսէն դալու ատեննիս անակնկալ ճամբորդութեան մը հանդըպեցան, տեսանք, որ շատ կըղարմանային վերը յիշված դիպւածին վրայ՝ որ իրենց գլխէն անցաւ: Մենք ան գիշերը հոս անցուցած, առտըւանց՝ որ Յուլիսի 29 էր, ժամը 10 ու կէսին հեծանք՝ Վաւաք երթալու: Եւ ճամբան գրեթէ բոլորովին լեռ, ու գազանաբնակ տեղվանք է: Օտուերով ծածկած ամայի անտառ մը, մէկ մը վեր, մէկ մը վար, սոսկալի տեղվանքներէ անցնելով, ցորեկվան 6 ու կէսին հասանք, որ Սամսօնէն 8 ժամ է:

Գլուխ 1 :

ՍՆՆՎ. Հոս Սէնդիլիսանան իջանք, ուրուն դէմը իջեան խան մը, բոլորտիքը խանութներով շուկայ մը ձևացած է. ատեն չանցուցած ան օրը մէկ մէկ սուրճ խըմէլէն ետև, 7 ին քառորդ մը մնացած հեծանք՝ Վլատիք երթալու : Ըսոր ճամբան ալ առջինին պէս, բայց զուարճալի է : Վլատիքին ժամ ու կէս մնացած՝ ալ դուր դաշտ մը ըլլալուն համար, հեռուէն Վլատիքը կրտեսներվի : Ըն օրը իրիկվան 12 ու կէսին ատենը հասանք, ու իջեանը իջնալնէս ետև քիչ մը հանգստացանք. ինչո՞ւ որ Գլուխքէն ալ հոս 6 ժամ ըլլալուն համար, ան օրը 14 ժամ եղաւ մեր ճամբորդութիւնը, Սամսոնէն մինչև Վլատիք :

Գլուխ 2 :

ԸՍ աւանը գեղեցիկ դիրք ունի՝ դէմը դուր դաշտ ըլլալուն, օդը առողջ ու օգտակար է. երկու իջեան կայ, բայց ՍՆՆ-

զիլխանա չի կայ. երբոր հարկաւորելու ըլլայ նէ, Մայնը գեղացիներուն ձիերը ժողվել տալու համար մարդ կրխրէէ. անոր համար ուզած ատեննիս չի կրցանք հեծնել: Ենծի կերևայ որ, մէնզիլի ձիերով ճամբորդութիւն ընելը՝ Վրիստոնեայ ըլլողին չի վայլեր. ինչու որ, ասանկ բռնի գեղացիներէն ձիերը կառնեն, ու ճամբորդին կուտան. թէպէտ ան մէնզիլխանայի ձիերուն համար ինչ որ կուտայ նէ, անանկ ալ անոնց կուտայ. բայց ձիերուն տէրոջը հաճութեամբը չէ. վերջապէս շատ ուրիշ բռնի բաներ ալ կրլայ. որուն պատճառը ճամբորդին մէնզիլի ձիերով ըրած ճամբորդութիւնն է, որ կարդալով քանի առաջ երթովի նէ կիմացվի ան: Մսկէց 8 ժամ է Մասսիա. բայց մէնք ուզեցինք Վաւզայէն երթալ՝ ան տեղի բաղնիքը տեսնելու համար: Վիշերը անցաւ՝ առտրւանց ժամը 1 ին հեծանք Վաւզա երթալու. որուն ճամբան քիչ ու դուր ըլլալուն, 4 ին հասանք, որ Սլատիքէն 4 ժամ է:

Պ. ա. Վ. :

(III) բաղնիք մը կայ Պրուսայիննե-
 րուն պէս բնական տաք ջրով, որ բը-
 լուրին երեսը շինված է. բայց մէջը բաւա-
 կան տաք չէ. երկու աւաղան կայ. մէկը պրզ-
 տիկ, որուն լայնութիւնը 2, ու երկայնու-
 թիւնը 3 կանգուն կայ՝ երկան քառակուսի
 ձևով, ուր առաջ կուգայ ջուրը, ու անկէց
 քարէ տաշտ մը շինված է դէպ'ի մեծ աւա-
 զանը, ուրկէց որ ջուրը ետքը մեծին մէջը
 կըթափի. որուն ալ երկայնութիւնը ու
 լայնութիւնը հաւասար 8 կանգնաչափ կայ.
 ասոր խորութիւնը մարդոց մինչև քամակը
 կելայ. մէջի բոլորտիքը կէս կանգուն բարձ-
 րութենով ու կանգուն մը լայնութենով
 աստիճան մը կայ. աւաղաններուն երթալու
 դրանքներսի կողմը՝ աջ դին սենեակ մը կայ
 հանդերձ դնելու համար. առաջ մեծ աւա-
 զանին մէջը չի կրցայ մտնել, բայց ետքը կա-
 մաց, կամաց ջուրը չերեցունելով մտայ.
 մէջը շատ չի կրցայ կենալ: Մաղնիքէն ելել-
 նուս ետև կնիկ մարդիկ սկըսեցին գալ, ո-
 րովհետև առտրվոնէ մինչև կէս օր էրիկ
 մարդիկ կըմտնեն, ու անկէց ետև կնիկ մար-

դիկ: Սենքքիչ մը կերակուր ուտելէն ետե,
 ժամը 7 ը կար, հեծանք Մասիա երթա-
 լու: Մուջ 2 ժամու չափ վեր վար լեռներէ
 անցանք, որ անկէց ետե դուր դաշտ մըն է
 մինչև Մասիա: Արթալու ատեննիս ճամ-
 բորդին մէկուն հարցուցի՝ թէ որչափ կայ
 Մասիային, “6 ժամ կայ ըսաւ”. ուրիշ
 ճամբորդ մըն ալ կուգար՝ անոր ալ հարցու-
 ցի, “4 ժամ կայ ըսաւ”. 2 ժամու չափ գա-
 ցինք՝ ուրիշ մըն ալ կանցնէր, անոր ալ
 հարցուցի նէ, “7 ը ժամ ըսաւ”. ստոնք ի-
 րեքն ալ Մասիայէն կուգային, բայց իրե-
 քին ալ պատասխանը մէկզմէկու հակառակ
 էր. ասկէց կրնայ իմացվիլ ինչ մարդ ը-
 լալին. անոր համար երկար բարակ ստոնց
 վրայ պատմել պէտքը չէ: Մսզուտրճալի
 դաշտը անցնելէն ետե, գիշերվան 2 ը կար
 Մասիա մտած ատեննիս. բայց քաղաքը
 մտնելէն ետե շատ նեղութիւն կրեցինք
 մինչև որ իջեանը իջանք նէ. մէկ մը որ,
 գիշեր ատեն ըլլալուն՝ փողոցները «խոտ-
 նէրը չէինք կրնար տեսնել. երկրորդ՝
 փողոցներուն վրայ ալ ծածկած ըլլալուն,
 շատ զգուշութենով անցնիլ պէտք էր.
 գլուխնիս մէկ տեղ մը չիզարնելու համար:
 Ինչևիցէ աս ճամբաներն ալ անվտանգ
 անցունելէն ետե, իջեան մը իջանք՝ քիչ մը

Հանգիստ ընելու համար, որովհետև անօրը Ելատիքէն հոն՝ Գաւզայէն անցնելով, մեր ճամբորդութիւնը 12 ժամ եղաւ :

Ամասիա :

Աս քաղաքը լեռներով պատած, ու պարտէզներով զարդարված երևելի ու շատ հին քաղաք է. ինչու որ լեռան երեսը կռապաշտութենէ մնացած հին շէնքեր կան սննեակներու պէս շինված. անոնց համար ոմանք գերեզմաններ են եղեր կըսեն : Վաղաքը չի մտած 2 ժամ առաջ, որ ձորը Կէրէն կըսկըսի, դուր դաշտը անցնելէն ետև աս դին ան դին տուններ շինված կան. որոնք մինչև Ամասիա 200 ի մը չափ կան. բոլորտիքն ալ թթենիներով լեցուն պարտէզներ շատ կան՝ շերամներուն իկէն որտէրուն կերցունելով մետաքս շինել տալու համար : Ասկէց կերևայ որ, աս քաղաքին մէջը երևելի է մետաքսին առուտուրը : Աս պարտէզները Աէշիլ ըրմախէն կըխըմեն : Սարդոցը ըսածին սալ ելով 550 տունի չափ շայոց ազգէն կայ, ու ոնք իրեք եկեղեցի ու իրեք դպրատուն ունին. ամմէն

մէկուն մէջը 70ական տղաք կան . դպրատուններուն մէջը քերականութեան արհեստ ամմենեին չիկայ : Սենք ասկէց Յուլիսի 31 ին առտրվան ժամը 1 ու կէսին հեծանք թուրքհալ երթալու . առջի բերանը ետ կրդառնանք կարծեցի , բայց ետքը միտքս բերի եկած ատեննիս լէշիլ ըրմախին վրայի կամուրջէն Վօկրի-յէն անցնելնիս . քիչ մը ատեն ձորու մէջէ գացինք , ու սոսկալի տեղերը եկանք անցնելու , ուր տեղ երկու դին ապառաժոտ լեռներով պատած , մէջ տեղը նեղ ճամբայ մը թողած է . որ ան ճամբէն ալ գետակ մը կանցնի : Մսկէց անցնելու տատենս շատ զգուշութենով անցայ մէկ տեղս քարի չիզարնելու համար : Մռաջ աս տեղվանքը գողերու վախ կրկրեն եղեր . բայց հիմայ անանկ վախնալու բաներ չիկայ : Մս դժուար տեղվանքն ալ անցած , սկըսեցինք ձորու մէջէ երթալ . բայց գիշերն ալ սկըսեց կոխել : Վնտոր ուրախացայ , երբոր ճամբան ճամբորդները տեղ տեղ կրակ վառած , ու իրենք ալ բոլորաիքը նստած տեսայ նէ . ինչեիցէ ասկէց ալ անցնելնուս ետե , ան գիշերը 3 ին հասանք թուրքհալ , որ Մմասիայէն 12 ժամ է :

ԹՎԻՆՄԱՆ . ԻՄՅ ԹՎԻՆՄԱՆ :

ԹՎՆՊՆՏ Մնատօլուին գեղերը կամ
աւանները հին հողոտ մոխրոտ կե-
րևան , բայց ասիկա ամմէնը կոխեց . իր ա-
նունէն ալ աղէկ մը կրնայ իմացվիլ . ասանկ
ըսելովս անոր անունը իսկ ԹՎՐՔՏԱԼ է ըսել
չէ . ինչո՞ւ որ ԹՎՐՏԱԼ է . բայց ան տեղա-
ցիները ԹՎՐՔՏԱԼ ըսելուն համար , ես ալ
ԹՎԻՐՔՏԱԼ ըսի . ան տեղին համար է գոե-
հիկներուն բանեցուցած աս խօսքը . “Երհաւ
լէ հե՛ղ րէր հաւլլէ” . Իլատիքին պէս հոս ալ
Սէնզիլխանա չիկայ . բայց մենք հոս ան գի-
շերը անանկ սրճարանի մը մէջ անցուցինք ,
որուն աղտոտութեան պատմութիւնը ընել
ինծի անհնար՝ կարգացողին ալ չիհաւտալու
բան մը ըլլալուն , թողուցի ու չորի : Մու-
տրվանց՝ որ () գոստոսի 1 էր , ժամը 1 ու
կէսին հեծանք ԹՎՕԳԱՍ ԵՐԹԱԼՈՒ . առաջ
3 ժամու չափ մնացած ձորու մէջէ անցանք ,
ետքը պզտիկ դաշտի մը մէջէ անցնելով
դէպ ’ի լեռներուն անկիւնը պոճախը եր-
թալնուս , Մմասիա կերթանք կարծեցի .
ինչո՞ւ որ Մմասիա երթալու ատեննիս ալ
անանկ դէպ ’ի լեռներուն անկիւնը գացինք .

ինչև իցէ ան տեղականքն ալ անցունելով ,
ցորեկվան 7 ու կէսին ատենը մտանք թօ-
գատ , որ թըքհալէն 8 ժամ է :

ԹԵՄԱԿ . ԵՂԻՐ :

ԵՍ քաղաքին արևմտեան հարաւային ,
ու արևելեան դին լեռներով պատած ,
ու տուներն ալ մէջ տեղը եղած ձորուն
մէջը՝ ու լեռներուն երեսը շինված ըլլալուն ,
գեղեցիկ տեսք մը ունի . մանաւանդ անոր
հիւսիսային դիու ընդարձակ ձորը , որ պար-
տէզներով զարդարված ըլլալուն , գուար-
ձալի տեղ մը եղած է . որ ան դէպ 'ի հիւ-
սիս ժամու մը չափ տարածութիւն ունենա-
լէն ետև , լեռով կրվերջանայ . որուն երեսն
է Հայոց վանքը : Ահշիլ ըրմախը աս ձորուն
մէջէն ալ կանցնի : Քաղաքին մէջը իջևան-
ներուն խանէրուն երևելին՝ Աջվօտայ ա-
նունով իջևանն է . գուռը՝ արևելեան
դին մեծ հրապարակ Տչրան մը կայ , անոր
կրնայի . որուն ծարն է Սէյտան ճամիսի
ըսած երևելի մզկիթը . բնակիչներն են
Հայ , Յոյն , և Տաճիկ . Հայերը 7 եկեղեցի
ու մէկ դպրատուն մը ունին . իրենք ալ 2000

տունի չափ կան .200 տունի չափ ալ կաթո-
լիկ ըսված Հայերէն կան . որոնք թէպէտ
հիմայ եկեղեցի չունին , բայց շինելու հա-
մար տեղ մը առած են : Անք հոս վոյվո-
տայ իջլանը իջանք . ան գիշերը անցուցած,
առտըվանց մեր նստած սենեակին օպային
քովը Աւրոպացիի մը սենեակ տեսնելով ,
ուզեցի իմանալ ո՞վ ու ի՞նչ ազգ ըլլալը .
ետքը իմացայ անոր Տերիայու Հալիպո-
ղիէն կաթոլիկ ըսված Հայերէն ըլլալը ,
որ՝ ազարու վանքէն գիրք ծախելու համար
խրկեր էին : Արեն քովը Հայերէն հին ձե-
ռագիր , ու հին ժամանակի թագաւորներու
ըստակներ ալ շատ կար . որոնց մէջը Հայոց
թագաւորներու ըստակներէն գտնել ու-
զեցի , բայց չիկրցայ գտնել . ծախելու հա-
մար բերած գիրքերը՝ աղօթագիրք , բուր-
վառ աղօթից , առաջնորդ երկնից , ու ասոնց
պէս բաներ էին . ուր որ պտըտեցայ նէ , աս
Ղիւանիէն ՚ի զատ ուրիշ գիրք ծախող մը
ալ չի տեսայ . ան տեղվանքը թէ որ մէկը
գիրք մը ծախու առնել ուզէնէ , շատ նեղու-
թիւն կրկրէ մինչև որ իր ուզած գիրքը
ձեռք անցունէ : Հետևեալ օրը քիչ մը
չուկ պին մէջը պտըտելէն ետև , դպրա-
տունը տեսնելու գացի , ու հոն իմացայ
աղոցը թիւը 150 ի չափ ըլլալը . բայց մէջը

քերականութեան արհեստը անունով միայն ըլլալուն համար, ուրախութենով դուրս ելլելու տեղը, տրտմութենով ելած մեր սենեակը գացի: Աս քաղաքը այոց ազգէն երեւելի մարդիկ շատ կան. որոնք չէ թէ հասարակ դպրատուն՝ սյլ երեւելի համալսարան մը կրնան շինել, թէ որ ազգասիրութեան հրովը վառվելու ըլլան. որոնց մէկ քանին մեր իջած իջեանը կրնրստին վաճառականներու յարմար տեղ ըլլալուն: () գոստոսի 4 ին վանքը տեսնելու գացինք. որուն շինելուն պատճառը առջի Գէորգ առաջնորդն էր, որ իր գերեզմանն ալ եկեղեցիին դրանը դէմ բական է. մէջը ուխտաւորներու համար յատուկ տեղ ունի. և արեղաներ կան, որոնք կարգաւ անխաբան իրենց պաշտօնը կրկատարեն. դպրատուն մը կայ, որուն շինվելուն պատճառն ալ հիմակվան խոհեմազարդ առաջնորդ Ափրեմ վարդապետն է. մէջը 15 տղայ առնելու կանոն դրված է, բայց 5ը բթամիտ ըլլալուն համար ճամբայ տրւեր են՝ ու մնացած 10 տղաքը վար դրբեր են, որոնք գիշեր ցորեկ հոն մնալով, կերակուրնին ու լաթերնին դպրատունէն է: Ասոնց վրայ յատուկ վարժապետ դրված է, որուն ամսականը առաջնորդ Ափրեմ վարդապետը

իր քսակէն չհանէն կուտայ : Աբեղաներէն մէկն ալ երբեմն դասերնուն կընայի : Գպարատանը բացված ատենին նայելով, տղաքը եղածին չափ առաջ դացած են . ու շատ ալ առաջ պիտի երթան՝ թէ որ հմուտ վարժապետ մը ունենան, որ ան քիչ մըն ալ աշխարհագրութիւն սորվեցունելու կարող ըլլայ : Թէպէտ ուրիշ գիտութիւններ ալ սորվեցունել հարկաւոր է, բայց աշխարհագրութեան արհեստը ամէնէն աւելի ինծի հարկաւոր կը թուի . ինչո՞ւ որ՝ աշխարհիս մէջի եղած բաները սորվեցունելէն՝ ի զատ, ազգասիրութիւն ալ կը սորվեցունէ, քանի որ ուրիշ ազգերու վրայ տեղեկութիւն ստանայ ան կարդացողը : Մենք ասկէց () գոստոսի 6 ին առաջվան 10 ին ատենը հեծանք Աարխն երթալու, որ ան թօգատին ու Սիվազին մէջ տեղն է . ճամբան դժուար ըլլալուն համար, շատնեղութիւն քաշելէն ետեւ, ցորեկվան 7 ին ատենը հասանք Աարխն ըսւած գեղը, որ թօգատէն 9 ժամ է :

Ապրիլն :

Այս գեղը մէնդիլիսանա չըլլալէն 'ի զատ ,
 տուն ալ չիկայի պէս բան մըն է . ինչո՛ւ
 որ , անասունի պէս գետնին տակը փորած ,
 քիչ մըն ալ ծառերու ճիւղերով բոլորտիքը
 գոցած բնակութիւններ են շիներ : Ա՛նք
 գացած ատենը գեղին մէջը մէկ երկու մարդ
 կար . գեղացիք ամմէնը հոն չէին , որովհետեւ
 հնձելու ատենը՝ գեղին բոլորտիքը արտեր
 ըլլալուն համար , ժամու մը չափ հեռու
 խոտաւէտ չայլըլէ տեղ կրբնակին՝ ա-
 նասուններնին Կամարնին արածելու հա-
 մար , ստոնց եղած տեղին հասարակաբար
 Այլայ կրսեն հոն , բայց յատուկ գեղա-
 ցիներուն բնակութեանը Շէնլիք : Առաջ
 մենք հոս իջնալու դիտաւորութիւն ունե-
 ինք , բայց գեղացիները հոն չըլլալուն հա-
 մար , հարկաւոր եղաւ քիչ մըն ալ առաջ
 երթալ : Թօգատէն մինչև աս տեղվանքը
 սոսկալի ճամբաներէ անցնելով , գողերու
 համար ալ վախնալով , շատ նեղութիւն
 կրեցինք , թէպէտ առաջ մեզի հասկըցու-
 ցին ճամբան վախու բան չըլլալը . բայց
 ճամբաներուն գէշութիւնը՝ ու գողերու

յարմար տեղերը ըլլալը՝ մեզ կրվախցունէին։
 Փառք արարչին՝ բան մը չիկար, բայց ինչ
 օգուտ, մութը կոխեց, ճամբու վրայ ալ
 գեղ չիկայ. մենք հոգնած, ձիերն ալ հոգ-
 նելնուն, ինչ ընելնիս չգիտէինք. շատ ու-
 ղեցինք տեղ մը գտնելան գիշերը անցունելու,
 մանաւանդ ձիերուն համար, որ անոնցմով
 Միվազ պիտի երթայինք՝ ճամբու վրայ ուրիշ
 տեղ մէնզիլխանա չըլլալուն համար. ինչեիցէ
 ասանկ քիչ մը ատեն գացինք, ետքը
 ձիավարը «ի-րի-ճի-ն» մօտը (էնիք
 ըլլալու յոյս մը տրւածին պէս, սկըսեցինք
 ձիերը քշել. հասանք ան տեղը,
 ուր տեղ որ ամայի լեռներէ՛ի զատ բան
 մը չիկար։ Մտենը անցած մութ էր, մենք
 հոգնած անօթի էինք. ձիերն ալ սկըսեցին
 առաջ չերթալնին մեզի հաւտացնել. մէնզիլի
 ձիերն ալ սովորութիւն մը ունին, թէ որ
 հոգնելու ըլլան, ուր են նէ հօն կրկանգնին,
 ամմենեին առաջ չեն երթար։ Աս միջոցիս
 քիչ մըն ալ առաջ գացինք չեգացինք,
 հեռուանց մուխ մը տեսանք, ու սկըսեցինք
 ճամբէն ելլելով դէպ՛ի ան մութին
 երթալ, ատիկա մեզի թէպէտ ուրախութեան
 աւետիս էր, բայց տրտմութեան ալ
 կրնար ըլլալ. ինչու որ, անանկ տեղվանք
 գողերն ալ կրակ կրվառեն։ Ին-

տոր ուրախացանք երբոր Շէնլիք ըլլալը տեսանք նէ. ետքը հոն հասանք, ու ծառերու ճուղերով ծածկած պարապ խորճիթ մը գըտանք մէջը մտանք: Հիմայ ուր է ան կատուի պէս ձիավարը. կատուած գազան դարձաւ, ու սկըսեց խեղճ մարդոցը հայհոյութիւններ ընելով պօռալ կանչել, որ մահիճներ Էաթմիշէր, գարի, ու կերակուր բերեն, անկէց ետեւ ալ գան, ու կրակ վառեն. վերջապէս գերիի պէս մեզի սպասաւորութիւն ընեն, ևայլն, ևայլն: Աս բանիս չիկրցայ համբերել, ու ըսի, Սենք ո՞վ ենք, մարդիկը ինչ պարտք ունին մեզի մահիճ տալու, կրակ վառելու, նստած տեղերնիս, որ անոնք են շինած, մեզի մեծ շնորհք չէ՞ մի, հիմայ ստակովնիս քիչ մըն ալ կերակուր տան նէ, շատ մարդասիրութիւն ըրած կըլլան: “Ինչ” ըսաւ ձիավարը, “ստակ, ո՞րու, թող տըլէք, դուք ալ բան մի պիտի սորվեցունէք, անոնք որ աս տեղվանքը նստեր են, ՚ի հարկէ ճամբորդները պիտի նային”: Ողորմելի մարդիկը կրակ վառեցին, մահիճներ ալ բերին, թէպէտ մեզի հարկաւոր չէր հետերնիս մահիճ ըլլալուն համար, բայց մարդիկը մարդասէր ըլլալնուն մեծարել կուզէին. բերող մարդուն ըսի որ, ձիավարին խօսքին չինայի, բայց մեր ստակովը մեզի քիչ մը կերակուր

բերէ . մարդիկը սիրով բոլոր ուզած բաներնիս որչափ որ կրնային նէ բերին :

Հնորհակալ ենք Մատուծոյ , որ մեզի անգիշերը ան տեղըցուցուց , ուր քիչ մը քնանալնուս ետեւ ելանք , ու ճին ատենը հեծանք Սիվազ երթալու . ճամբան թէպէտ չէր տեսնուիր գիշերը ըլլալուն , բայց գէշ չէր . միայն թէ Սիվազին ժամ ու կէս մնացած բարձր լեռան մը երեսէ անցանք , որուն ճամբան լայն է , բայց դէպ'ի անդունդի պէս ձորը ծուռ ըլլալուն , քիչ մը վտանգաւոր է կրնամ ըսել , մանաւանդ ձմեռ ատեն : Մտեղվանքն ալ անցած , առտրվանց ժամը 2 ին ատենը Սիվազ հասանք , որ Թօգատէն 18 ժամ է :

Սելտալ . Սեֆասարիտ :

Մ. քաղաքը դաշտին մէջ տեղը ըլլալուն , գիրքը ինծի շատ գեղեցիկ երեցաւ . մէջ տեղը բլուր մը կայ , որուն վրայ է փրկփրկած պարիսպին մէկը . տուներն ալ հեռրւանց պարսպի պէս կերևան : Վրդըլըրմախը հարաւային դիէն կանցնի , քաղաքին մէջէն ալ երկու ջուր կանցնի . մէկուն Մատ-

ղիկ գետ հոսարսոս սոս կըսվի, որ տունե-
 րուն առջևէն անցնելով աղտեղութիւննե-
 րը հոն կըվազէ. մէկալը Ռոգընիկու ջուր
 Ռոսիլ սոս կըսվի, որ մաքուր ըլլալուն հա-
 մար քաղաքացին ասկէց կըխմէ: Թէ որ
 ամառը ցամքի նէ, Ասպուտիկ անունով ա-
 ոու մըն ալ կայ, անկէց կըխմեն: Վաղաքէն
 դուրս՝ բայց մօտ է քառասուն մանկանց գե-
 րեզմանը, որ Հայերուն հասարակ գերեզ-
 մանատունն է. յայտնի նշան մը չիկայ հոս
 քառասուն մանկանց գերեզմանը ըլլալուն,
 բայց հին եկեղեցիի մը տեղ, ու 25 հատի
 չափ ալ տնկըված քարեր կան՝ երեսները
 խաչ նշան փորված: Միվազէն քառորդի մը
 չափ դէպ ՚ի հիւսիս երեւելի վանք մը կայ, ո-
 րուն մէջը իրեք եկեղեցի կայ. մէկուն հա-
 մար ըսին, թէ “ Առսաւորիչ հայրը շիներ
 է” . որուն ձեւը քառակուսի չորս քեօշէլ
 ըլլալով, խորանին տեղն ալ ուրիշ եկեղե-
 ցիներու պէս կամար չունի. մէկալին համար
 “ Սենեքարիմ Հայոց թագաւորը շիներ է”
 ըսին. երրորդին մէջն ալ երկու գերեզման
 կայ, մէկը աջ դին, մէկալն ալ ձախ. աջ դիու
 գերեզմանը Վետագարձ Պետրոս վարդա-
 պետ՝ 1078 թուականով էր, ձախ դիունն
 ալ Թէոդորոս արեղայ՝ 1170 թուականով.
 դրանը դուրսի դին քառասուն մանկանց

խորանին առջևը՝ մէկ մեծ հասարակ քար մը
 տեսնելու համար, հարցուցի թէ արդեօք
 ինչո՞ւ համար ան մեծ քարը հոն բերեր են.
 Բայց ետքը իմացայ, որ անոր իջման քար
 կրսեն, քառասուն մանկանց ատենը Վրիս-
 տոս Տէրն մեր վրան իջեր է ըսված ըլլալուն
 համար: Ան քարը առաջ քառասուն ման-
 կանց գերեզմանատանը քովը եղած ատենը՝
 քաղաքացի Հայերը շատ ուզեր էին վանքը
 տանել, բայց Տաճկները չիփտնալով, և
 քարը պիտի պաշտրովի կարծելով, արգիւր
 էին: Անցած տարի պարոն մը Սուսաստա-
 նէն ան տեղվանքը պտրտելու ատենը՝ ան
 քարին համար քաղաքացի Հայերը խնդիրք
 էին ըրեր վանքը տանելու համար, որ ան ալ
 ան ատենը գտնւիող քաղաքապետին ըսե-
 լով, առեր ու վանքն էին բերեր. անիկա
 տաշեն ու քառասուն մանկանց խորանին
 վէճ քար պիտի շինեն: Այկեղեցիներուն
 դրանը դուրսի դին բակը առաջնորդներուն
 գերեզմանն է. աս վանքին մէկ տարվան
 մէջը (2000 հօխայ ցորեն կերթայ. ինտոր
 որ իրենք ըսին: Արբոր Շէնլիքէն հեծանք
 Միվազ գալու համար, աս վանքին առջե-
 ւէն անցնելու ատեննիս, ձիավարը ուզեց որ,
 հոն երթանք. առջի բերանը չիմացայ ինչ
 ըսել կուզէր. ինչո՞ւ որ, ինքը Տաճիկ ըլլա-

լովը իր հաւատքին դէմ էր եկեղեցի եր-
թանք ըսելը . բայց ետքը երբոր իր դիտա-
ւորութիւնը իմացայնէ , շատ վշտացայ , որ
կուզէ եղեր երթալ , ու ուտել խմէլէն և տե՛
կարելի է քիչ մըն ալ ստակ առնել . թէպէտ
իսկոյն չեստելով մը , ըրած անօրէնութիւն-
ներուն վրայ շատ բան խօսեցայ . բայց ինչ
օգուտ , ան չընէ նէ մէկալը կընէ , թէորտ-
սանկ սորված են նէ : Քաղաքին մէջը 1300
տուն շայ կայ . 6000 տուն ալ Տաճիկ , կա-
րելի է 5 կամ 6 տուն ալ Յոյն ըլլայ . շայե-
րը մատուռներէն ՚ի զատ իրեք եկեղեցի ու-
երկու դպրատուն ունին , մէկուն մէջը 70 ու
մէկալին մէջը 100 տղայ կայ . 70 տղով դպրա-
տանը վարժապետը երիտասարդ մըն էր ,
մէկալ 100 տղով դպրատանը վարժապետն
ալ քահանայ մըն էր . բայց ասոնց մէջք
բնաւ պտուղ ըսված բանը չիկար : Տունե-
րուն վրայի տանիսը գեղերուն տանը պէս
հողով լեցված է , միայն երևելի Տաճկրնե-
րուն տանը վրայ կղմինտը Իլէ-Ռէ կայ .
թէ որ շայերուն մէջն ալ տանը վրայ կըզ-
մինտրով ծածկել ուզող ըլլայնէ , Տաճկը-
ները թող չեն իտար : շայերը բաղնիքին
մէջն ալ երսանկ նալըն չեն կրնար հագնիլ ,
Տաճկրնեքէն ծեծ չուտելու համար : Իջե-
աններուն մէջը Սոր խսանն էր քիչ մը մաքուր ,

որ հոն քիչ մը հանգիստ կրցանք ընել. ուր
կէց () գոստոսի 10 ին առարկան ժամը 10 ու
կէսին հեծանք Օլառա երթալու. ճամբան
դուր ու դժուար չըլլալուն, ան օրը իրիկվան
ժամը 9 ին հասանք, որ Սիվազէն 12 ժամ է :

Օլառա :

ՍԻՎ ԱՕՍԻ գեղերուն մէջը մեծը աս է .
100 տունի չափ Հայ, 250 ի չափ ալ Տա-
ճիկ կայ. որոնց մէջը Հայոցմէ դարձած շատ
կայ : Աս տեղը հիւրանոց Քսաֆիք օրհասը
կրսեն մէկ ակոռ մը կայ, որուն մէկ դին ձիւ-
րուն, ու մէկալ դին ալ օտարականներուն
համար շինված է. ինտոր որ մենք ալ օտա-
րական ըլլալով ան տեղը իջանք : Տայց ա-
սանկ ըսելովս գեղացիներուն տունը ասկէց
աղէկ չիմացվի. ինչու որ, իրենք ալ անանկ
ակոռին մէկ դին, կամ թէ ակոռի պէս
տեղվանք է նստած տեղերնին : Աս տե-
ղը մէնզիլխանա չըլլալուն համար ուզած
ատեննիս չիկրցանք հեծնել. մանաւանդ մեր
հետն ալ մէկ երկու մարդ առնել կուղէինք .
որովհետեւ հոս չեկած Օլարաէն Վնարէս
երթալու ճամբան կը վախցըվի ըսելը ըսե-

ցինք անոր համար գեղացիները մարդ մե-
զի տըլին, որ մենք ալ կերակուրնիս ուտե-
լէն ետե՛ գիշերվան՝ 3 ին ատենը հեծանք
Նտրէս ել թալու. ժամ ու կէսի չափ եր-
թալնուս ետե, սկըսեցինք սոսկալի տեղ-
վանքներէ անցնիլ. ուր տեղ Վապառաժոտ
լեռներ, գազան բնակելու խոռոչներ, ու
անդունդի պէս ձորեր կար: Արբեմն վեր
դէպ'ի երկինքը կելէինք, երբեմն վար դէպ
'ի անդունդը կիջնայինք. ճամբան ալ տեղ
կար՝ որ 4 մատի չափ լայնութիւն ունէր,
տեղ ալ կար որ 10 կամ 12 մատի չափ լայ-
նութիւն ունէր. թէ որ մարդ սրկըրդի ու
դէպ'ի ձորը իյնալու ըլլայնէ, ուրիշ բան
պէտքը չէ ըսել, իսկոյն կըմեռնի: Ատենը
գիշեր, ճամբան ալ ասանկ վտանգաւոր ըլ-
լալուն, շատ նեղութիւն կրեցինք. թէպէտ
ետքը Աստուծոյ օգնութեամբը ան գէշ
տեղվանքը անցնելով, առտըվան 2 ժամ
մնացած ()պա ըսված տեղը հասանք, բայց
մենք ալ հոգնեցանք, անօթեցանք, ու շատ
ալ մսեցանք. իջանք վար, ուր տեղ մէկ մեծ
վրան չորս մը կար: Ան միջոցին, վրա-
նէն մօրուքուր ծերունի մարդ մը գուրս
ելաւ. ու երբոր մեզ տեսաւ՝ սկըսեց զաւկը-
ները կանչելով, եկէք կրակ վառեցէք ը-
սել. որ մենք ալ անոնց վառած կրակին

բոլորտիքը նստելով, քիչ մը տաքցանք :
 Աս բարեսիրտ ծերունին մեզի Դաժուն ,
 Հաց , ու սեր դայանի ալ բերել տրւաւ .
 ինքը ազգաւ Հայ էր, զաւկրներու, հարսներ
 ու, ու թոռներու ալ տէր : Ա ըանին բո-
 լորտիքը կար ձիեր, կովեր, ու ոչխարներ,
 որոնց ամէնը աս բարեսիրտ ծերունիին ըւ-
 լալովը հարուստ էր : Ասանկ վը սնները, որ
 ան տեղականքը () պայ կըսվին, կամ թէ ա-
 նոնց մէջինները, չէ թէ ուրիշ բանի համար
 ասանկ տեղականք եկած են, բայց միայն ա-
 նասուններնուն ճարակ գտնալու համար :
 Մենք ասկէց կերակուրնիս ուտելէն, ու
 քիչ մըն ալ տաքնալէն ետև, կրկին հեծանք
 ու ամայի անտառներու մէջէ անցնելով
 ցորեկվան Տ ին ատենը Անտրէս հասանք .
 որ աս ալ Օտուաէն 12 ժամ է :

Անտրէս :

Ա զեղն ալ մեծ, ու դիրքն ալ ծուռ է,
 որուն վարի դին 100 տունի չափ Հայե-
 րը ունին, վերի դին 220 ի չափ Տաճկրները :
 Մեր գացած ատենը Հայերը իրենց տա-
 նը առջին կալերնին կազմած կաշխատէին :

Պատանիին մէկուն՝ քովերնիս պտըտած ա-
տենը ըսի թէ, Ասանկ ախոռներու մէջ ամ-
մէն ատեն ինտոր կընստիք, որոնց մէկ դին
անասուններնիդ, ու մէկալ դին դուք: Աս-
կէց աղէկ տուն կըլլայ մի ըսաւ: Անոր
աս պատասխանին վրայ շատ ցաւեցայ, ա-
սանկ տգէտ մնալուն համար. մանաւանդ
խօսելուն եղանակն ալ չէր գիտեր, ինտոր
որ ծերունիներն ալ չի գիտէին: Օտաւ ալ՝
հոս ալ՝ ինտոր որ առաջ ըսի 100 ահան տուն
չայոց ազգէն կայ, բայց երկուքին մէջն ալ
գոնէ 2 տղով դպրատուն մը չի կայ: Սենք
ան գիշերը հոն անցուցած, առտըվանց՝ որ
() գոստոսի 12ն էր, ժամը 10 ին հեծանք
Ե ապին Վարահիսար երթալու. թէպէտ
միջոցը շատ երկար չէ, բայց լեռ տեղվանք,
ու ապառաժոտ ճամբաները լլալուն համար
շատ նեղութիւն քաշած, ան օրը ժամը 4 ին
ատենը հասանք, որ 1 յնտրէսէն 6 ժամ է:

Ե ապին Վարահիսար:

ԱՍԿԸ. թէպէտ երևելի քաղաք մըն է,
բայց շատ տգեղ երևցաւ ինձի. ինչու
որ, սև ապառաժ լեռան մը երես, (որուն ե-

րեսը դէպ'ի արեւմուտք կրնայի), բոլորտիքն
 ալ հանքային ու ապառաժ լեռներով ու
 բլուրներով լեցուն ըլլալով, տեսքը գե-
 ղեցկութիւն մը չունի. մանաւանդ ան ա-
 պառաժ լեռը՝ որ իր երեսին վրայ ունի
 քաղաքը, բոլորովին սև ըլլալուն, տուներուն
 վրայ ալ անանկ սև քարերով ծածկելնուն
 համար, հեռավանց քաղաքն ալ սև կերևայ:
 Ինակիչներուն մէջը՝ Յոյներէն ու Տաճ-
 կրներէն՝ ի զատ 500 տունի չափ Հայոց
 ազգէն կայ: Մենք ան օրը իրիկվան
 ժամը 10 ին հեծանք Շէհրան երթալու.
 Քայց քաղաքէն քիչ մը հեռունալնուս ետև,
 սկրսեցինք բարձր լեռան մը վրայ ելել,
 որուն գլխարութենէն ձիերը հոգնելուն
 համար, մէկալ դին եղած Յունաց գեղը ի-
 ջանք գիշերը հոն անցունելու, որ Շապին
 Վարահիսարէն 2 ժամ է: Առտրվան մօտ
 ժամը 8 ին ատենը հեծանք, ու ձորու մէջէ
 անցնելով մտանք լեռ տեղվանքը եղած ա-
 մսյի մեծ անտառի մը մէջ, ուր քիչ մըն ալ
 առաջ երթալնուս ետև, Պրնտրքը Պէլ
 ըսված տեղը ցորեկվան մօտ իջանք քիչ մը
 կերակուր ուտելու համար, ուր իրեք քա-
 ռորդի չափ նստած, կրկին հեծանք ու վեր
 վար լեռներէ ու անտառներու մէջէ անցնե-
 լով, ան օրը ժամը 8 ին ատենը Շէհրան հա-
 սանք, որ Շապին Վարահիսարէն 16 ժամ

է ըսվեցաւ մեզի , բայց այնչափ չիկար . 14
 Ժամ կըթուի ինծի :

—
 Եկեա՛ն :

Այ գեղը բլուրին ստորոտն է 120 ի չափ
 Տաճկի տունով . տուներուն ախոռի
 պէս ըլլալը գրեւ պէտքը չէ . ինտոր որ
 Օլառահն ու Վնտրէսինը , անանկ ալ աս
 տեղինը : Այանին տունը գեղէն քառորդի
 մը չափ դուրսն է . մէնզիլխանա մը կայ ,
 որուն տէրը սուտղրուց ծեր մըն էր : Ան
 իրիկունը ասկէց մութը չի կոխած ճամբայ
 ելլել կուզէինք , բայց ձի չըլլալուն համար
 սպասեցինք , մինչև որ պատրաստեցին . ու
 գիշերվան Չին ատենը հեծանք Պաշ Զիֆտ-
 լիք երթալու : Ղամբան դժւար չէ . բայց
 ձիուն մէկը շատ տկար ըլլալուն , կէս
 ճամբան կանգնել հարկաւորեցաւ , որ քիչ
 մը խոտ կերցունելէն ետև հեծանք . ու գի-
 շերվան Տ ին ատենը Պաշ Զիֆտլիք ըսված
 տեղը հասանք , որ Եկեա՛նէն 6 ժամ է :

Պաշտօնական Զեփարէ :

ԸՍ գեղը դաշտի մը մէջ է . Տաճկերներէն
 'ի զատ 20 տունի չափ Հայոց ազգէն , ու
 մէկ մէնզիլխանա մը կայ : Ըն գիշերը աս
 տեղը իրեք ժամու չափ քունով անցուցած ,
 հետեւեալ օրը , որ էր () գոստոսի 14 , առ-
 տըվանց ժամը մէկին քառորդ մը մընացած
 հեծանք Արզնկեա երթալու . բայց անոր
 հիւսիսային դիու եղած Աղտաղը անունով
 լեռնէն անցնելը վտանգաւոր է ըսվելուն ,
 մէնզիլճին ինքը առաջնորդեց մեզի , ու բե-
 րաւ մեզ ան լեռանը մօտ եղած գեղը , որ ան-
 կէց ալ երկու մարդ առնելնուս տեւ սկըսե-
 ցինք ելլել դէպ 'ի լեռը : Ըս ալ Հապին
 Վարահիսարէն Հէհրան երթալու ա-
 տեննիս մեր անցած լեռանը պէս բարձր , ու
 գժուար էր . բայց ասոր դէպ 'ի Արզնկեա
 իջնալու դին մէկալէն շատ գժուար էր :
 Իջնալու ատեննիս անանկ սաստիկ հով մը
 ելաւ , որ բոլոր կեանքիս մէջը անանկ հով
 մը տեսած չէի . ան ատենն ալ անանկ ճամբէ
 մը կանցնէինք , որուն երկու դին անդունդի
 պէս ձորեր կար . թէ որ ձիերէն վար չիջնա-
 յինք , ու երբեմն ալ երեսի վրայ չի բալէինք

նէ, հովուէն բռնութիւնը անշուշտ մեզ ձորը կրճգէր. տեղ ալ կար որ, շատ ծուռ էր դէպ 'ի ձորը, ու ամմենեին ճամբայ չի կար: Ա երջապէս Աստուծոյ օգնութեամբը ան դրժւար տեղվանքն ալ անցնելով, գիշերվան 2 ին ատենը հասանք Արզնկեա, որ Պաշ Զիֆտլիքէն 12 ժամ է:

Արզնկեա . Անդէպ :

Աս քաղաքը դաշտին մէջ տեղը ձմերուկի պարտէզներով զարդարված զուարճալի տեղ մըն է. բոլորտիքն ալ մէկ երկու ժամ հեռաւորութենով գեղեր շատ կայ. դաշտին երկայնութիւնը արեւելքէն դէպ 'ի արեւմուտք 12 ժամ, ու լայնութիւնը հիւսիսէն դէպ 'ի հարաւ 3 ժամ է: Ամէն դին լեռներով պատած, Ափրատ գետը քաղաքին հարաւային դին է, որ ան դէպ 'ի արեւելքէն թէրճան երթալու ճամբէն կուգայ, ու դէպ 'ի արեւմուտք կրվազէ: Սենք հիւսիսային դիւ լեռներէն անցնելով հոն գացինք, բայց հարաւային դիւ լեռներէն անդին չանցնելիւր, Վիւրտերուն տեղվանքը ըլլալուն համար: Հայոց ազգէն 700 տունի չափ քա-

զաքին մէջը, 1000 տունի չափ ալ գեղերուն
 մէջը կայ : Առաջ աս տեղմանքը 24 վանք
 կայ եղեր. բայց հիմայ անոնցմէ 6 ը կայ մնա-
 ցած, 18 ը ատեն ատեն Վիւրտերը կողոպ-
 տեր ու քակեր են. մէկ երկուքին արտերուն
 ալ քիչ ատեն է որ, քաղաքացի Տաճկըները
 ձեռք են զարկեր, ու ասանկով բան մը չէ
 մնացեր : Վաղաքին մէջը իրեք հատ երևելի
 եկեղեցի կայ, որոնց մէկը նոր շինված է.
 դպրատուն մը կայ 60 կամ 70 տղով, բայց
 երկար չընեմ՝ մէջը կարդալ չի կայ : Աս տեղի
 Հայերը Աիրակի օրն ալ առուտուր կընեն,
 իրենց ըսածին նայելով՝ առաջ քիչ մը ատեն
 չեն ըրեր, բայց ետքը ծերունի երևելին ը-
 նելուն, մէկալներն ալ անոր նայելով քիչ
 քիչ սկըսեր են. մինչև որ բոլորովին հիմայ
 հասարակ օրվան պէս խանութներն կըբա-
 նան : Աս տեղմանքի Հայերը երբեմն
 Վիւրտերուն տղոցը Վիրվայ կըլլան. ա-
 նանկ որ, երբոր Վիւրտի մը տղայ պիտի
 թլփատովի, ան մարդը որ Վիրվայ պիտի
 ըլլայ նէ, ան ատենը ըլլալու բոլոր ծախքը
 ընելէն ետև, թլփատութեան ատենն ալ
 թզան պիտի գրկէ : Արզնկեայու արևել-
 եան դին է Ղիպիճէ Պօղազը ըսված
 տեղը, ուրկէց թէրճան կերթըվի. բայց
 Վիւրտերը 20 օր առաջ առանց վըտանք

Հասցունելու ճամբորդ մը թող չեն իտար եղեր . կամ կը հանվեցունեն թող կուտան , կամ թէ կը մեռցունեն ու կը ձգեն եղեր . իրենց մէջէն երևելիին մէկը Արզնկեայու մէջ բանտը դրված ըլլալուն համար , ետքը Արզնկեայու Պէյը ան մարդը վերստին իրենց դարձունել տալու համար խոստանալուն , իրենք ալ ճամբորդներուն վնաս չի տալու համար խոստացեր էին . որ անկէց ետև ճամբորդները սկըսեր էին ան ճամբէն երթալ ու գալ . բայց բոլորովին ապահով չէր : Մենք ասկէց () գոստոս 18 ին առտը վան ժամը 11 ին հեծանք թէրճան երթալու՝ Արզնկեայու Պէյին մեզի տըւած մարդուն հետ , որ մեզմէ առաջ 20 մարդով խրկած գանձունէ հասցունէ . որոնք առջի իրիկվընէ հեծան Արզնկեայէն դէպ'ի Ղիպիճէ Պողազին 4 ժամու չափ հեռու եղած Մէրթէկ գեղը Պէյին պատւիրելուն համար մեզի սպասելու . բայց երբոր ան գեղը հասանք նէ , մարդիկը գանձը առած ու գացած էին . աներ համար մեր հետ եղող մարդը ան գեղէն երկու մարդ մեզի ընկեր ընել ուզեց կասկածաւոր տեղվանքէն անվնաս անցնելու համար : Աս միջոցիս կրկին էր մեր ցաւը . ինչու որ , ձիերն ալ շատ գէշ էին , որոնց մէկուն վրայ որ բեռ կար նէ ,

անկէց առաջ չերթալը գիտնալով, ուրիշ ձի մը գտնալու ետեւէ եղանք. որ ան ատենն ալ կէս ժամու չափ հեռու Սաղլըխ ըսված տեղն էր գեղացիներուն ձիերը: Ան ատենը Պէյին մարդն ալ “Չեզի հետ ասկէց երկու մարդ պիտի գայ” ըսելով, մեզմէ ընծայ առաժ անյայտ եղաւ: Անկէց մեզի հետ երթալու մարդոցը մէկն ալ, “Բան չիկայ մէկ մարդ մը կրբաւէ” ըսելով գնաց. մնացիներ մենք, ձիավարը, ու մեզի հետ գալու գեղացի մարդը, որ հաց կտրելու անգամ դանակ չունէր. թէպէտ՝ գեղացին շատ կըստիպէր “Ա՛լ ակնալու բան չիկայ՝ երթանք” ըսելով, բայց առջի բերանը չիկրցանք համարձակիլ. ինչո՛ւ որ քիչ մը առաջ ճամբորդներ կուգար անկէց, հարցուցինք նէ, քիչ մը կը վախցըվի ըսին: Ատքը մենք մեզ Աստուծոյ յանձնելով, ու մէկըղմէկ խրախուսելով սկըսեցինք առաջ երթալ. մտանք ան ձորը, ուրկէց որ կըսկըսի գողերէն վախնալու տեղվանքը. քիչ մը երթալնուս ետեւ, հեռը վանց դէպ’ի մեզ երկու մարդ գալը տեսանք. որոնց մէկը գանձին հետ ըլլող մարդոցմէ ըլլալով, անոնց հասնիլ ու մէկ տեղ երթալ ուզեր էր. բայց վերջը չիկրնալուն, դարձեր ու գեղէն ընկեր մը առաժ՝ երթալու ատենը, Քիւրտին մէկը ասոնց քովը գալով հաց էր

ուզեր , ու վրան ալ նայել սկըսեր էր նէ ,
 “ Հաց չունինք մենք աղքատ ենք ” ըսելով
 դարձեր էին . աս մարդը երբոր մեզ տեսաւ
 նէ , շատ ուրախացաւ . իրեն հետ առած ըն-
 կերը ետ դարձուց , ու ինքը սկըսեց մեզի դալ-
 բայց երբոր ան Վիւրտին մօտեցանք , գե-
 ղացին , որ մեզի հետ էր նէ , քովը գնաց ու
 չեխելով կըսէր թէ , Ինչու համար մեր մար-
 դը վախցուցիր . ան ալ՝ Աս քեզի հետ բան
 չունիմ ըսաւ . բայց միայն ան Վիւրտը չէր ,
 ան տեղը ծառին տակը հինգ վեց Վիւրտ ալ
 նստէր էին : Ինչեւիցէ Աստուծով աս տե-
 ղէն ալ անցանք , բայց գեղացիին համար-
 ձակութեանը զարմանալով իմանալ ուզե-
 ցի երթալու չեխելուն պատճառը , որ իբ
 պատմութենէն ետեւ իմացանք : Աս մարդը
 Վիւրտերուն լեզվէն գիտնալուն համար ,
 Արզնկեայու ու Վիւրտերուն Պէյերուն
 մէջ տեղը դեսպանութիւն ընելովը , բոլորն
 ալ կըճանչնան եղեր . մանաւանդ Վիւրտե-
 րուն Պէյերը շատ կըսիրեն եղեր , “ Ա էլե
 կէլ ” ըսելով : Աս ձորին մեջէն է որ Ափրատ
 գետը կանցնի , ու դէպ ’ի Արզնկեա կեր-
 թայ . մենք ձորը անցած , Տապան ըսված
 տեղը եկանք , որ ձորը մտնելէն մինչեւ հոս
 4 ժամ է . ասկէց ալ երբեմն դաշտի մէջէ ,
 երբեմն ալ բլուրներէ անցնելով , գիշերվան

1 աւ կէսին հասանք Խառխն, որ Երզնկեա-
յէն 12 ժամ է :

Խառխն :

Ստեղծանքը գտնուած գեղերուն կամ
թէ երկրին թերձան կրսվի . ինտոր որ
աս Խառխն անուն գեղին ալ կրսվի . որուն
մէջը 20 տունի չափ այոց աղգէն կայ . մենք
ան գիշերը հոն անցուցած , առտրվանց , որ
() գոստոսի 19 ն էր , ժամը 1 ին հեծանք
Ղշխալա երթալու . 2 ժամու չափ երթալ-
նուս ետև , Սև ջուրին վրայ շինված կամուր-
ջին քովի լեռանը վրայ եկեղեցիի պէս շէնք
մը տեսնելու համար , ձիս վազցուցի դէպ
ի հոն՝ ինչ ըլլալը աղէկ մը տեսնելու հա-
մար , որ քովը գերեզմանատունով քարաշէն
եկեղեցի մըն էր : Ետ ուղեցի գրված քար
մը գտնալով , ինչ ըլլալը իմանալ , մանա-
ւանդ անոր քովու գերեզմանատան քարե-
բուն վրայ , ըայց գրված քար մը բնաւ չիկար :
Մն տեղը ատենօք գեղ մը եղած պիտի ըլ-
լայ , եկեղեցիին ու գերեզմանատանը նայե-
լով . որուն մէջի բնակիչները կարելի է
Վեոն օղու ըսված երևելի գողին երեսէն

փախած ու մէկ ուրիշ տեղ մը գացած ըլլան .
ինչու որ ան հռչակաւոր գողին կեցած տեղը
հոն մօտ լեռան երեսը քարանձաւ մըն էր :
Աս ճամբան դուր ըլլալուն , մինչև Աշխալա
չի հոգնելով ան օրը իրիկվան ժամը 11 ու
կէսին հասանք , որ Խառխնէն 12 ժամ է :

Աշխալա :

Այ գեղին մէջը առաջ 103 տուն ալ Հայոց
ազգէն կայ եղեր . բայց պատերազմին
ատենը ամմէնն ալ Արզի ու մցի Հայոց հետ
մէկ տեղ Ախլցխա գացեր էին , հիմայ ալ
հինգ և վեց տուն անկէց դարձողներէն կայ :
Անք ասկէց ատեն չանցուցած հեծնել
կուզէինք . բայց ձիերը շատ գէշ ըլլալուն
մէնզիլճին 3 ձիու տեղը սայլ մը տալ կուզէր
բեռերն ուս համար , ու մեր հետը եղած
մարդուն համար : Աս միջոցիս սայլին ծանր
երթալը չի խորհելով , ուրիշ մըն ալ մեզի
համար գտնել ուզեցի . բայց ետքը չի գրտ-
նելուս՝ բեռը անոր բեռցուցինք ու խրկե-
ցինք , որ մենք ալ մինչև կէս գիշեր քնա-
նալէն ետև հեծնենք : Չիավարները քիչ մը
նստելէն ետև , ժամը 3 ին մեզ արթնցուցին .

Թէպէտ շատ կանուխ էր, բայց ի՞նչ օգուտ,
 ելած գտնուվելնուս համար ժամը իրեք ու
 կէսին ատենը հեծանք Արզիւում երթա-
 լու: Աս տեղվանքը տեղ տեղ բլուրներ
 կար ալ նէ, ճամբան դուր ըլլալուն, շատ
 դիւրին էր մինչև Ալլաճայ ըսված գեղը, ուր
 լուսնալուն մօտ հասանք:

Ալլաճայ:

Ա գեղը Արզիւումի դէմի դաշտին արև-
 մտեան դին ու Աշխալէայն Արզիւում
 երթալու ճամբան է. մէջը բնական տաք
 ջրով բաղնիք մը կայ, որուն չորս դին պատ,
 բայց վրան բաց է. անոր քովն է բնական
 տաք ջրով փոքրիկ լիճն ալ, որ գետնէն կը-
 քղիւէ. անկէց ելած գոլորշին ՚ի հարկէ օդը
 կապականէ: Աս հաճկրներէն ՚ի զատ 40
 տունի չափ Այոց ազգէն կայ. մենք քիչ մը
 կերակուր ուտելէն ետև հեծանք, որ ալ 3
 ժամ կըմնար մինչև Արզիւում: Ղամբան
 գեղ մըն ալ կայ, որ ան ալ անցնելնուս ե-
 տև, () գոստոսի 20 ցորեկվան 2 ու կէսին
 ատենը հասանք Արզիւում անուն հռչա-
 կաւոր քաղաքը, որ Աշխալայէն 9 ը ժամ է:

Լյուբլին . Կարելի , կամ Թեոֆիլով :

Լսեռեւելի քաղաքը դաշտին ծարը ա-
րեւելեան ու հարաւային լեռներուն
ստորոտը ըլլալով , դիւքը մեզի շատ գեղե-
ցիկ երեցաւ . մէջ տեղն ալ բլուր մը կայ , ո-
րուն վրայ շինված է միջնաբերդը . հարա-
ւային դիու լեռները մինչև Արզնկեա մենք
գօտեւորված տեսանք . քաղաքին առջևը ե-
ղած ընդարձակ դաշտին երկայնութիւնը ու
լայնութիւնը՝ 4 ժամու չափ կայ . քաղաքին
մէջը Տաճկրներէն ՚ի զատ 550 տունի չափ
ալ Հայոց ազգէն կայ . որոնց շատը պատե-
րազմին ատենը Ախլցխա գացողներէն դար-
ձած եկած են . թէ որ հիմայ ալ անկէց հոս
դառնալ ուզող ըլլայնէ , չի կրնար ընտանի-
քով () սմանցոց հողը անցնիլ , Առուսի
տէրութենէն արգիլված ըլլալուն համար :
Ինիկ քաղաքացիները որ առաջ ընտանի-
քով գացեր էիննէ , հիմայ առուտուր ընե-
լու համար միայն էրիկ մարդիկ կերթան
կուգան , ու օտարականի պէս ալ կեան-
քերնին իջլաններու մէջ կանցունեն : Աս
տեղ հին դպրատուն մը , ու մէջն ալ 80
տղայ կայ . անոնց վարժապետը շատ խեղճ

էր . 80 ղուռուշ ամսական տալու խոստացեր ու չէին տրւեր : Մեր առջի գացած օրը քնով անցուցինք՝ շատ քնհատ ըլլալնուս համար . հետեւեալ օրը , որ () գոստոսի 21 էր , առտըվընէ մինչև իրիկուն ձմեռվան պէս ձուն գալուն , դուրս չի կրցանք ելլել . բայց 22 ին բարեկամի մը հետ բաղնիք մը լըվացվելու գացինք , որուն մէջը շատ մութ էր . մէջի բաղնեպանները Ա ղացի տղաք էին : Թէ որ մարդ մը ուզէ Սողոմ Գոմոր քաղաքներուն մէջի եղած բաները տեսնել , որուն համար Մատուած ամենաբարին ու արդարագատը կործանելով ան քաղաքները ոչինչ ըրաւ նէ , անիկա Մատուծոյ կամացը հակառակ ու սատանային հաճելի բաները պիտի տեսնէ , թէ որ աս տեղի բաղնիքները երթալու ըլլայ : Բիչ մը լըվացւելէն ետև դուրս ելայ , ու մեզի տրոյած տունը գացի : Աիրակի օրը եկեղեցի երթալէս ետև , բարեկամի մը տուն գացի՝ որ հրաւիրեց մէկ տեղ կերակուր ուտելու . ուրկէց կերակուրը լըմըննալէն ու քիչ մըն ալ նրստելէն ետև , սենեակս դարձայ : Մ. քաղաքին մէջը գինի չըլլալուն , օղի բաժնի շատ կըխըմեն . կերակուրի ատենէն 2 ժամու չափ առաջ կըսկըսեն խըմել , մինչև որ կերակուրէն ելլեն . գտնըող Հայոց երևելի-

ներուն մէջը խռովութիւն մը կար, որ շաբաթ մը առաջ սկըսեր էին, ու բնիկ քաղաքացի երևելիներէն մէկ երկուքը բանտը դրեր էին: () գոստոսի 24 ինցորեկվան 5 ինաս տրտմառիթ ազգատեցութեան լուրը առած՝ հեծանք, ու գիշերվան մէկ ու կէսին Մշխալա իջանք. գիշերը հոն անցուցած, առտըվանց 1 ու կէսին հեծանք Պայպուրդ երթալու. բայց ան օրը քիչ մը հիւանդ ըլլալուս, շատ դժւար էր ինծի ճամբայ երթալը. թէպէտ ճամբաներն ալ լեռ տեղվանք էր, բայց մենք շատը ձորէ անցնելով՝ իրիկվան 10 ին ատենը մտանք, որ Մշխալայէն 12 ժամ է:

Պայպուրդ կամ Բաբէրդ:

ՄԱԿԸ, ձորուն ծարը՝ երկու դին ալ լեռներով պատած զուարճալի քաղաք մըն է. որուն մէջէն Ղորոխ գետը անցնելով Սև ծով կրթափի. եկած ատեննիս կանուխ ըլլալուն, քիչ մը քաղաքին բոլորտիքը կրնայի պտըտիլ, բայց տկար ըլլալուս համար պառկեցայ ու աղէկ մը չի կրցայ տեսնել. գիշերն ալ քիչ մը քնանալով զօրանա-

լէն ետև , առտրվան իննին ատենը հեծանք :
 Եւ աջ Յ ժամու չափ դէպ'ի վար իջանք , ետ-
 քը սկըսեցինք ձորու մէջէ ապառաժոտ տեղ-
 վանքներէ անցնիլ , բայց տեղ տեղ ալ ծա-
 ոերով զարդարված զուարճալի տեղվանք
 շատ կար : Ատև մտանք Աիւմիւշխանէին
 պարտէզներուն մէջը , որոնք Յ ժամ մնա-
 ցած կըսկըսին . իր համանուն գետակն ալ
 աս ձորէն անցնելով պարտէզներուն շատ
 օգուտ ունի : Սենք աս տեղերն ալ անցած ,
 իրիկվան 12 ին ատենը Աիւմիւշխանէ հա-
 սանք , որ Պայպուրդէն 12 ժամ է :

Աիւմիւշխանէ :

ԱՆՈՒՄՆԸ վերի դին ուր որ քաղաքը
 նստած է , կիսաբոլորակը լլալուն , քա-
 ղաքին դիրքն ալ լեռան երեսը կիսաբո-
 լորակի պէս է . քաղաքը երթալու համար
 ան լեռը ելլելու կէս ժամու չափ պէտք է :
 Եւ քաղաքին մէջի տուններէն , որ տեղ ալ
 փողոցներէն « խախնէրէն » , գրեթէ ամ-
 մէն տեղէն վար նայվելու ըլլայ նէ , ձոր
 կերևայ . դէմի դին կամ ուրիշ տեղ նայվե-
 լու ըլլայ նէ , լեռ : Սէջը հոյներէն ու

Տաճկըներէն՝ ի զատ 200 տունի չափ Հայոց ազգէն կայ : Սենք գիշերը հոս անցուցած , առտրվանց ուզեցինք կանուխ հեծնել . մէնզիլճին առջի բերանը հոգ չի տանելով ասոր ձի չիկայ ըսաւ . բայց ետքը Արքայական հրովարտակը իսկոյն իրեն գտցընել տրւած , () գոստոս 27 ցորեկվան 3 ին հեծանք ու սկըսեցինք առջի օրվան մեր եկած ճանբան երթալ , մինչև լեռան տակը . անկից ձորէն անցնելով սկըսեցինք բարձր սուկալի լեռան մը վրայ ելլել : Այց երբոր մեկալ դին իջանք նէ , ձիերը հոգնելուն համար , Աստաւու ըսված գեղը իջանք գիշերը մնալու . որ Աիւմիւշխանէէն 4 ժամ է : Ան լեռնէն անցնիլը ձմեռ ատեն անհնար ըլլալուն , ճամբորդները ուրիշ ճամբայէ մը կերթան . թէպէտ հեռու է մինչև Տրապիզոն 24 ժամ ըլլալուն , բայց ասոր պէս վտանգաւոր չէ :

Ըստաւու :

Աս գեղը բլուրին վրայ ըլլալուն , վարը ձորին մէջը քովը ախոռով խանութ մը շինված կայ՝ ճամբորդներու համար , որ մենք ալ հոն իջանք : Ան գիշերը հոն անցու-

ցած, առտրվան մօտ 10 ին ատենը հեծանք Տրապիզոն երթալու: Բայց քիչ մը երթալնուս ետև խորհեցանք, որ ամենս մէկ տեղ երթալու ըլլանք նէ, ան օրը Տրապիզոն չենք կրնար մտնել. անոր համար ձիավարներէն մէկը մեր սպասաւորին հետ բռին քովը թողուցինք, ու մէկալ ձիավարը հետերնիս առած, անոնց չինայելով սկըսեցինք ձիերը քշել. բայց մինչև Ղէվիզլիք ըսված տեղը շատ նեղութիւն քաշելով գացինք, ճամբաները մէկ մը վեր մէկ մը վար լեռ տեղիւնք ըլլալուն համար: Արբոր հոն հասանք նէ, քիչ մը կերակուր ուտելու համար իջանք. ու մածուն հաց ուտելէն ետև կրկին հեծանք, դուր ու զուարճալի տեղերէ անցնելով իրիկվան 12 ու կէսին ատենը Տրապիզոն հասանք, որ Ղէվիզլիքէն 6 ժամ է, Բստաւոիէն 14 ժամ, բայց Ախլամիշխանայէն 18 ժամ է:

Տրապիզոն:

Այս հռչակաւոր քաղաքը Արստանդնուպօլսէն 530 աշխարհագրական մղոն հեռաւորութենով Ալե ծովուն եզերքն է. որ տն լեռան ստորոտը թլլալուն, մանաւանձ

պարտէզներով ալ զարդարված ըլլալուն,
 գեղեցիկ տեսք մը ունի : Նաւահանգիստը
 ձմեռ ատեն նաւ կենալու յարմար չէ .
 ժամու չափ հեռու դէպ'ի Սամսոն Փլադա-
 նային նաւահանգիստը ասկէց աղէկ է . բայց
 ան ալ Սինապին նաւահանգիստին պէտ-
 քովորովին ապահով չէ : Տրապիզոնէն
 քառորդի մը չափ հեռու դէպ'ի արևելք
 Տէյիրմէն Տէրէսի անունով գետ մը կայ .
 որուն վրայ քարաշէն նոր մեծ կամուրջ
 Էօփրէ-մը շինված է . բնակիչներն են շայ,
 Յոյն ու Տաճիկ : շայերը հիմայ 3 եկեղեցի,
 ու մէկ դպրատուն մը ունին . դպրատան մէ-
 ջը 50 տղայ կայ , բայց կարդալ չիկայ . ի-
 րենք քաղաքին մէջը 500 տունի չափ կան .
 բայց գեղերուն մէջը 1000 տունի չափ . 200
 տունի չափ ալ կաթովիկ ըսված շայերը ու-
 նին . որոնք շայոց եկեղեցիներէն մէկը ի-
 րենց անցուցած փլցուցեր ու կըշինէին :
 շոս եղած ատենս շատ ժանտամաճ ըլլա-
 լուն , տունէն դուրս շատ անգամ չիկրցայ
 ելլել . անոր համար հարկաւոր եղած բանե-
 րուն վրայ շատ տեղեկութիւն չի կրցայ ըս-
 տանալ : 25 օր աս քաղաքին մէջը անցուցած ,
 26 երրորդ օրը , որ էր Սեպտեմբերի 23 .
 տուտրվան 2 ին ատենը բարեկամներու
 մաք բարով ըսած , Բրէսէնդ անուն շոգե-

նաւը մտայ Կոստանդնուպօլիս երթալու . որ անկէց ետե ալ քառորդի մը չափ կանգնած , սկըսեց անիւները Լեւոնիւնիւնիւրը գառնալով քաղաքէն հեռանալ , ու իր ճամբան երթալ : Են օրը օդը պարզ , ու ծովն ալ խաղաղ ըլլալուն , մէկ ժամու մէջ 10 մղոն ճամբայ կրնէր : Եսանկ մինչև հետեեալ օրը՝ որ Սեպտեմբերի 24 էր , առտրվան 11 ու կէսին ատենը անմիջաբար քալելով բերաւ մեզ Սամսոնին առջին , ու ճամբորդ առնելու համար կանգնեցաւ . ուր տեղ նաւէն ելլելու ու գալու մարդոցը տեղաւորվելը 4 ժամու մէջ լմրնցած , ճամբայ ելանք . ու իրիկվան 12 ու կէսին ատենը Սինապին առջին հասած՝ երկաթը ձգեց , անկէց իրեն հարկաւոր եղած ամուխը Լեւոնիւնիւնիւրը համար . թէպէտ աս տեղ ալ 4 ժամու չափ կանգնելէն ետե ճամբայ ելանք , բայց նաւաւարին “ Սինապէն մինչև Կոստանդնուպօլիս ալէկոծութիւն ֆուլունայ կայ ” ըսածին պէս ըլլալուն , շատ նեղութիւն կրեցի . մանաւանդ գիշերը որ հիւրնտցած պառկեր էի սենեակի մը մէջ , որուն պատուհանը փեմծ իրեն աղէկ մը գոցված չըլլալուն , քիչ քիչ ներս ջուր կուգար : Եռջի բերանը բնաւ երեքալու ատեն չունենալուս՝ համբերեցի , անանկ կանցունենք

կարծելով , բայց ետքը ալիքին հուշային մէկը պատուհանին զարնելով բացաւ , ու ջուրն ալ ներս անկողինիս վրայ գալով , գլխէս մինչև ոտքս թրջեցաւ : Ան տեղը եղող սպասաւորը իսկոյն իմացած , եկաւ մահիճս փոխեց , ու ինչ որ պէտք էր նէ ընելէն ետև , պատուհանն ալ աղէկ մը գոցեց , բայց ես ալ մտելուս աւրովեցայ : Գիշերը անցած՝ առտու որ եղաւ , քիչ մը զօրութիւն առած վեր ելայ . վարը շատ տաք , ու գէշ հոտ մըն ալ ըլլալուն , նաւաւ վարը քիչ մը կերակուր ուտելու համար շատ կըստիպէր , բայց թէյէն չայէն՝ ի զատ ուրիշ բան մը չէի կրնար բերանս առնել . ասանկ մինչև հետևեալ օրը , որ Սեպտեմբերի 26 էր , նաւը իր քայելուն միջոց չիտալով , ցորեկվան 5 ու կէսին ատենը Աոստանդնուպօլիս բերաւ մեզ հասցուց , ու Պահճէ Վաբուսը ըսված ծովեզերեայ նաւահանգիստին խիւլէին առջին երկաթը ձգեց : Աս ալ մինչև ան ատենը ընտացած , նաւավարին հարկաւոր եղած յարգանքը ցրցունելէս ետև , դուրս ելայ , ու նաւակ մը մտայ , որ թօբհանէ ըսված տեղը բերաւ . ճամբորդութիւնս ալ 73 օրվան մէջը լմընցաւ , Աոստանդնուպօլսէն ելած ու մտած օրովս :



ՅԼՆԿ

Ըմասիա	82 :
Ըշխալա	109 :
Գաւաք	78 :
Գաւզա	80 :
Երզնկեա , Եկեղեաց	103 :
Օռա	96 :
Լնտրէս	98 :
Լըզիւում . Կարին , Կ (Թեոդուպօլիս) .	111 :
Բըճայ	110 :
Բստաւուի	115 :
Թրքճալ , կամ Թիւրքճալ	84 :
Թօգատ , Եւդոկիա	85 :
Իլատիք	78 :
Ինեէ , կամ Ինէօ	75 :
Խառխն	108 :
Կարխն	89 :
Կիւմիւշխանէ	114 :
Շապին ԳարաՏիսար	99 :
Շէճրան	101 :
Չարչամպա	73 :
Պայպուրդ , կամ Բաբերդ	113 :
Պաշ Չիֆտլիկ	102 :
Սամսօն , Ըմիսօն	71 :
Սինապ , կամ Սինոք	68 :
Սիվազ , Սերաստիա	92 :
Տրապիզոն	116 :

ԵՂՆՆԵԿ

1839

ԸՄԻՆ

Գու՛ Տէր յաւիտեան կաս :

Ի ԶՄԻՌՆԻԸ

ՈՒՉԸ